Հայկական գիտական եւ ակադեմական հանրագիտարան
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատությունն ազատորեն հասանելի է «Միջազգային Համաստեղծություն Գալուստ Կիւլպենկեան հիմնադրամի» կողմից։

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported License.

Դուք կարող եք.
- ազատորեն տարածել, տպագրել, ցուցադրել, կատարել եւ մեկնաբանել գրքի բովանդակությունը
- մշակել գրքի բովանդակությունը՝ ենթակա հետեւյալ պայմանների.

You are free to:
- Share – to copy, distribute and transmit the work
- Remix – to adapt the work

under the following conditions:

Ե. Հ. Մ. Հ. Խ. Ս. Հ.
Պոլսեցարցեր բոլոր յերկրցերի, միացե՛ք.

2278
768

Բ.-Գ. Կ. Բ.

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Ռ. Գ. Կ. Ռ. ՇՏՍԸ

Թարգմանեց Պ. Ս. Թ Ս. Ջ Ս.'Ե

№ 22

Կ. Կ. Ռաճակի Ռազմա-Հեղափ. Խորհրդին կից
Հայկ.՝ Ռազմ. Խմբագր.-Հրատ. Հանձնաժողով

Դարաբիլիսա—1926

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ-ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

	ԳԻՆԸ
1. **Ենվալդ.**— *Հրացանա-հրաձգային գործ*	35 կ.
2. **Լ. Տոցկի.**— *Կարմիր հուշատետր*	20 կ.
3. **Գուլովակի.**— *Բանվոր զաստակարգի և Ռ. Կ. Կ. գրոշի տակ.*	40 կ.
4. **Կոզլովակի.**— *Քոզարկում I մաս.*	20 կ.
5. **Կոզլովակի.**— *Քոզարկում II և III մաս.*	50 կ.
6. **Մ. Ռաֆես.**— *Կարմիր բանակ.*	15 կ.
7. *Հուշատետր հրացանաձիգ կարմիր բանակային, 3 գծանի հրացանը խնամելու համար.*	20 կ.
8. *Հետևակի մարտական ծառայություն 1 ռ.*	—
9. **Դ. Կին.**— *Խորհրդային իշխանությունն ու նրա կառուցվածքը.*	40 կ.
10. **Ե. Մորոզով.**— *Հետևազորի մարտավարություն (տակտիկա).*	2 ռ. 50 կ.
11. **Ս. Միխեյեվ յեվ Վ. Սվեճցիցկի.**— *Ռազմական տեղագրության դասագիրք 1 ռ*	75 կ.
12. *Բ.-Գ. Կ. Բ. Հետևակի ժամանակավոր մարտական կանոնագիրք. մաս I.*	60 կ.
13. *Ս. Խ. Հ. Մ. Ռ.-Հ. Խ. 1924 թ. № 1397 հրաման. Հետևակի ժամ. մարտ. կանոն. I. մասի. հավ. և փոփոխ.*	15 կ.
14. *Բ.-Գ. Կ. Բ. ժամանակավոր հրաձգային կանոնագիրք. Կոլտ սիստեմի հաստատուն գնդացիրը.*	60 կ.
15. **Յե. Սմիրնովակի.**— *Հրետանի.*	60 կ.

Խ. Ս. Հ. Մ. Հ. Խ. Ս. Հ.

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է»
1925 թ. հուլիսի 10-ին
Խ. Ս. Հ. Մ. Հ. Ռ. Խ.
ի. ս Նախագահի
Ա. ԲՈՒԲՆՈՎ.

Բ.-Գ. Կ. Բ.

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Բ. Գ. Կ. Բ. ՇՏՅԱԲ

Թարգմանեց Գ. ԱԹԱՏԱՆ

№ 22

Կ. Կ. Բանակի Ռազմա-Հեղափ. Խորհրդին կից
Հայկ. Ռազմ. Խմբագր.-Հրատ. Հանձնաժողով

Դարաբիլիսա—1926

Գրաւեալվար № 321/բ. Տիրաժ 1500

Տպագրական Տրեստի Ղարաքիլիսայի տպարան № 239

ՑԱՆԿ

Էջերեա

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ I. Ընդհանուր դրութիւններ . 6

ԳԼՈՒԽ II. Կարգապահական միջոցներն ու նրանց տեսակները . . 8

ա. Սոսկական կազմի համար . 8

բ. Ժամկետով ծառայող պետերի կազմի համար 9

գ. Մնացած պետերի կազմի համար. 10

ԳԼՈՒԽ III. Խրախուսանքի տեսակները 11

ԳԼՈՒԽ IV. Պետերի կարգապահական իրավունքների մասին. . . . 13

ԳԼՈՒԽ V. Կարգապահական ազդեցութեան միջոցների կիրառման և ի կատար ածելու կարգը . . 23

ԳԼՈՒԽ VI. Կարգապահական և խրախուսական միջոցների ժատյան . 27

ԳԼՈՒԽ VII. Գանգատների մասին . 29

Հավելվածներ. Կարգապահական և խրախուսական միջոցների ժատյանի ձևը 33

Գանգատների մատյանի ձևը . 37

ՈՒՂՂԱՆԻՇ

Եջ.	Տող	Տպված և	Պետք է լինի
7	5 վերևից	իրենց տրված	իր տված
31	4 ներքևից	կինի	կլինի
41	10 »	Обстоятельства вызывавщие	Обстоятельства, вызывающие

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակը բանվորների ու գյուղացիների իշխանության ստեղծած զինված ուժն է՝ Հոկտեմբերյան հեղափոխության մեծ նվաճումները պաշտպանելու և ամրապնդելու համար։

2. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կարմիր բանակը կոչված է ոչ թե մյուս ժողովուրդներին ստրկացնելու համար, ոչ թե բռնատիրության համար, այլ Խ. Ս. Հ. Մ. անկախությունն պահելու, աշխատավորների շահերը պաշտպանելու և խաղաղություն ու բանվորների և գյուղացիների խաղաղ աշխատանքը պահպանելու համար։

3. Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի ռազմիկի կոչումն ընդունած աշխատավորները հանդիսավոր խոստում են տալիս խստորեն և անշեղ պահպանել հեղափոխական կարգապահությունը և ստանց տարբերության կատարել բանվորական և գյուղացիական կառավարության իշխանությամբ նշանակված հրամա-

տարների բոլոր հրամանները։ Առանց կարգապահության չկա, և չի կարող լինել ուժեր և մարտունակ կարմիր բանակ։

4. Միապետությունների և բուրժուական-կալվածատիրական հանրապետությունների բանակներում կարգապահությունը հիմնվում է սոսկական զինվորներին ազնվական-բուրժուական սպայության դասակարգորեն յենթարկելու վրա։ Վորքան ավելի քիչ է գիտակից կապիտալիստական բանակի զինվորը, այնքան նա ավելի լավ է կատարում կապիտալիստական իրավակարգի պաշտպանի պարտականությունները։

Կարմիր բանակի կարգապահությունը բանվորա-գյուղացիական պետության նոր կարգապահությունն է. նա հիմնված է վոչ թե դասակարգորեն յենթարկելու վրա, այլ Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի նպատակի և նշանակության գիտակից հասկացողության վրա՝ բոլոր զինվորականների կողմից։

Վորքան ավելի գիտակից է Կարմիր բանակի ռազմիկը, այնքան նա ավելի լավ է կատարում իր հեղափոխական պարտականությունները սոցիալիստական պետության հանդեպ, և այնքան ավելի ժարտունակ է հանդիսանում Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակը։

5. Կարմիր բանակն ստեղծվել է 1918—1920 թվականների քաղաքացիական պատերազմի ընթացքում։ Այժմ Կարմիր բանակը կառուցվում է խաղաղության ու խաղաղ խորհրդային շինարարության պայմաններում։

Որքան ավելի ամուր և գիտակից լինի Կարմիր բանակում խաղաղ դրության ժամանակ զինվորական կարգապահությունը, այնքան ավելի մարտունակ կլինի Կարմիր բանակը, յերբ Խ. Ս. Հ. Մ. բանվորա-գյուղացիական կառավարության հրամանով նա կոչված կլինի աշխատավորների շահերը և Սոցիալիստական Հանրապետությունների Միության ազատությունն ու անկախությունը զինված ուժով պաշտպանելու համար։

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զինվորական կարգապահությունն այն կարգի ճիշտ պահպանումն է, որ սահմանված է Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակում որենքներով ու կանոնադրքերով և պահպանվում է պետերի հրամաններով ու կարգադրություններով։

2. Զինվորական կարգապահությունը նպատակ ունի յուրաքանչյուր զինվորականի մեջ մշակել՝ սոկունություն, հաստատակամություն, կորովամտություն, ճարպկություն, մարտական կյանքի զրկանքներին ու ծանրություններին դիմանալու սովորություն, բարեխղճություն և անձնազոհության ընդունակություն։

3. Զինվորական կարգապահությունը բոլոր զինվորականներից պահանջում է կանոնադրքերի դիտակից յուրացում և ճիշտ կատարում, լիակատար և մշտական հնազանդություն պետերին, նրանց հրամանների առանց առարկելու կատարում և ռազմական գաղտնապահություն։

4. Յուրաքանչյուր պետ պարտավոր է ո-

րենքների և կանոնադրությունների ճիշտ կատարման որինակ տալ, անշեղ հաստատակամությամբ պահանջելով ստորադրյալներից, որ նրանք կատարեն կանոնադրքերի կանոնները և իրենց տրված հրամաններն ու կարգադրությունները։

5. Զինվորականները պարտավոր են կատարել իրենց պետերի ծառայության վերաբերյալ բոլոր հրամանները, բացի ակնհայտ հանցականներից։

Յերբ ստորադրյալը ճշտորեն կատարում է պետի՝ ծառայության վերաբերյալ տված հրամանը, այդ հրամանի հետևանքների համար պատասխանատու յե միայն ինքը պետը, բացի հանցական հրամանները կատարելու դեպքերից, յերբ այսպիսի հրաման տվողի հետ միասին պատասխանատու յե նաև հրամանը կատարող ստորադրյալը։

6. Կարգապահության պահանջներն ամրապնդելու և գիտակցորեն կատարելու համար, պետերը պարտավոր են խրախուսել գերազանց հանդիսացողներին և պատժել զանցառուներին ու ծառայության կարգուկանոնը խախտողներին։

7. Մարտական պարագայում, մարտական հրամանը չկատարողների նկատմամբ, անհետաձգելի դեպքերում պետերը ոչ միայն իրավունք ունեն, այլև պարտավոր են գործադրել զինված հարկադրանք։

ԳԼՈՒԽ II

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

8. Կարգապահական միջոցը, դաստիարակության և գիտակից քաղաքացի-ռազմիկի ունակություններն ու հատկություններն արմատացնելու համար լինելով, կիրառվում է այն զանգանքների համար, որոնք խախտում են կարգապահության պահանջները։

9. Զանցանք կոչվում է զինվորականի այն գործողությունը, որ խախտում է ծառայության կարգը կամ ցույց է տալիս բարեխիղճ վերաբերմունքի և չանացողության բացակայությունը, այն պայմանով միայն, եթե այդ գործողության մեջ չկան շարամտորեն չենթարկվելու դիտավորություն և գիտակցական թշնամություն դեպի խորհրդային իշխանությունը, նույնպես և ուրիշ հատկանիշներ, որոնց հետևում է դատական պատասխանատվություն։

10. Պետերն իրավունք ունեն գործադրելու կարգապահական միջոցի հետևյալ տեսակները.

Ա. Սոսկական կազմի համար.

1. Նախազգուշացում.
2. Հիշեցում.

3. Նկատողություն.

4. Հանդիմանություն.

5. Հանդիմանություն շարքի առաջ.

6. Զրանցից հեռանալու արգելում մինչև 1 ամիս.

7. Հերթից դուրս վերակարգի նշանակում մինչև 5 վերակարգ.

8. Կալանք պահանջում մինչև 20 ր.

9. Կրճատում կամ զրկում հերթական կարճատև արձակուրդից.

10. Սև տախտակի վրա դրանցում մինչև 1 ամիս.

11. Անվան հայտարարում շարքի առաջ, զանցանքներն ու խախտումները թվելով.

12. Անվան հայտարարում հանդիսավոր նիստում, զանցանքներն ու խախտումները թվելով։

Բ. Փակեցով ծառայող պետերի կազմի համար.

1. Նախազգուշացում.

2. Հիշեցում.

3. Նկատողություն.

4. Հանդիմանություն.

5. Հանդիմանություն հրամանի մեջ.

6. Հերթից դուրս վերակարգի նշանակում մինչև 5 վերակարգ.

7. Կալանք պահանջում մինչև 20 որ.
8. Պաշտոնի բարձրացման չներկայացնելը.
9. Իջեցում ավելի ցածր պաշտոնի։

Գ. Մնացած պեսերի կազմի համար.

1. Նախազգուշացում.
2. Հիշեցում.
3. Նկատողություն.
4. Դիտել տալ (դիտողություն անել).
5. Հանդիմանություն.
6. Հանդիմանություն առաջադրությամբ.
7. Հանդիմանություն հրամանի մեջ.
8. Հանդիմանություն հրամատարական կազմի ժողովում.
9. Հերթից դուրս վերակարգի նշանակում մինչև 2 վերակարգ.
10. Տնային կալանք մինչև 7 որ.
11. Կալանք պահանջում մինչև 20 որ։

ԳԼՈՒԽ III

ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

11. Մրցակցություն զարգացնելու և որի-նակելիների հանդիսացման համար, սահմանվում են խրախուսանքի հետևյալ տեսակները.

1. Շնորհակալություն.

ա) շարքի առաջ և հանդիսավոր ժողովում,

բ) գրավոր,

գ) հրամանի մեջ.

2. Առանց հերթի կարճատև արձակուրդ տալը.

3. Պարգևատրում արժեքավոր նվերներով համապատասխան մակագրությամբ.

4. Պարգևատրում պատվի վկայականով, հանձնելով այդ հանդիսավոր նիստում.

5. Պարգևատրում մրցանակներով և սահմանված նշանակներով.

6. Պարգևատրում անձնական լուսանկարով, զորամասի պարգած դրոշի մոտ նկարած.

7. Զորամասի դրոշների պատվավոր ուղեկցողների (ընթերականների) ցուցակների մեջ մտցնելը.

8. Պարգևատրում անվանական հրազենով ու սրազենով մակագրությամբ և համապատասխան վկայականով.

9. Ավելի բարձր պաշտոնի նշանակում վաղակետ վկայագրի կարգով.

10. Պարգևատրում աշխատավորական Կարմիր Դրոշի շքանշանով.

11. Պարգևատրում պատվի հեղափոխական զենքով.

12. Պարգևատրում Կարմիր Դրոշի շքանշանով.

13. Զորամասի ցուցակների մեջ ընդմիշտ մացնելը։

ԳԼՈՒԽ IV

ՊԵՏԵՐԻ ԿԱԳԱՊԱՀԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

12. Բոլոր պետերին իրավունք է վերապահվում նախագուշացում ու նկատողություն անել և շնորհակալություն ու հանդիմանություն հայտնել, ինչպես շարքում, նույնպես և շարքից դուրս։

13. Պետերին, վաշտերի հրամատարներից ու քաղղեկներից սկսած և ավելի բարձր, իրավունք է վերապահվում դիտել տալ (դիտողություն անել), անունները շարքի առաջ հայտարարել, զանցանքներն ու խախտումները թվելով, և ներկայացնել արժեքավոր նվերների համապատասխան մակագրությամբ։

14. Հրամանի մեջ և հրամատարական կազմի ժողովում հանդիմանություն ու շնորհակալություն հայտնելու իրավունքը վերապահվում է առանձին զորամասերի հրամատարներին ու կոմիսարներին և ավելի բարձր պետերին։

15. Ջոկերի հրամատարները յեվ նրանց համապատասխան պետերն իրավունք ունեն.

1. Զրանոցից հեռանալն արգելել 1 որով.

2. Հերթից դուրս ծառայության նշանակել 1 վերակարգ։

16. Դասակների հրամատարների ոգնականները յեվ նրանց համապատասխան պետերն իրավունք ունեն.

Սոսկակաց կազմի վերաբերմամբ.

1. Զրանոցից հեռանալն արգելել մինչև 2որ.

2. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 2 վերակարգ։

17. Ավագները յեվ նրանց համապատասխան պետերն իրավունք ունեն.

Ա. Սոսկակաց կազմի վերաբերմամբ.

Կիրառել 16-րդ հոդվածում թվածները։

Բ. Կրտսեր պետերի կազմի վերաբերմամբ.

1. Հերթից դուրս ծառայության նշանակել 1 վերակարգ։

18. Դասակների հրամատարները յեվ նրանց համապատասխան պետերն իրավունք ունեն.

Ա. Սոսկակաց կազմի վերաբերմամբ.

1. Զրանոցից հեռանալն արգելել մինչև 5 որ.

2. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 3 վերակարգ.

3. Կալանավորել պահանջում 1 որով։

Գ. Կրտսեր պետերի կազմի վերաբերմամբ.

1. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 2 վերակարգ։

19. Վաշտերի հրամատարների ոգնականները յեվ նրանց համապատասխան պետերն իրավունք ունեն.

Ա. Սոակակաց կազմի վերաբերմամբ.

1. Զորանոցից հեռանալն արգելել մինչև 7 որ.

2. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 3 վերակարգ.

3. Կալանավորել պահանջում մինչև 2 որ։

Բ. Կրտսեր պետերի կազմի վերաբերմամբ.

1. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 2 վերակարգ.

2. Կալանավորել պահանջում մինչև 2 որ։

Գ. Միջին պետերի կազմի վերաբերմամբ.

1. Հերթից դուրս ծառայության նշանակել 1 վերակարգի։

20. Վաշտերի հրամատարներն ու քաղղեկները, գումարտակների հրամատարների ոգ-

նականները յեվ նրանց համապատասխան պետերը իրավունք ունեն.

Ա. Սոսկական կազմի վերաբերմամբ.

1. Զորանոցից հեռանալն արգելել մինչև 10 որ.

2. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 4 վերակարգ.

3. Կալանավորել պահանոցում մինչև 5 որ։

Բ. Կրտսեր պետերի կազմի վերաբերմամբ.

1. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 3 վերակարգ.

2. Կալանավորել պահանոցում մինչև 2 որ։

Գ. Միջին պետերի կազմի վերաբերմամբ.

1. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 2 վերակարգ.

2. Տնային կալանքի յենթարկել 1 որով.

3. Կալանավորել պահանոցում 1 որով։

21. Գումարտակների հրամատարները, գընդերի հրամատարների ոգնականները յեվ նրանց համապատասխան պետերն իրավունք ունեն.

Ա. Սոսկական կազմի վերաբերմամբ.

1. Զորանոցից հեռանալն արգելել մինչև 15 որ.

2. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 5 վերակարգ.

3. Կալանավորել պահանջում մինչև 10 որ։

Բ. Կրտսեր պետերի կազմի վերաբերմամբ.

1. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 4 վերակարգ.

2. Կալանավորել պահանջում մինչև 3 որ։

Գ. Միջին պետերի կազմի վերաբերմամբ.

1. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 2 վերակարգ.

2. Տնային կալանքի յենթարկել մինչև 3 որ.

3. Կալանավորել պահանջում մինչև 2 որ։

22. Գնդերի հրամատարներն ու կոմիսարները յեվ նրանց հավասարասխան պետերն իրավունք ունեն.

Ա. Սոսկական կազմի վերաբերմամբ.

1. Զորանոցից հեռանալն արգելել մինչև 1 ամիս.

2. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 5 վերակարգ.

3. Կալանավորել պահանջում մինչև 20 որ.

4. Կրճատել կամ զրկել հերթական կարճատև արձակուրդից.

5. Սև տախտակի վրա գրանցել մինչև 15 որ.

6. Անունները հայտարարել զորամասի հանդիսավոր նիստում, թվելով զանցանքներն ու խախտումները.

ՀԱՅԿ ԵՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԳԱՐԱՆ

7. Գործադրել 11-րդ հոդվածի 2 –7 կետերում հիշված խրախուսանքների տեսակները և ներկայացնել 8—13 կետերում թվածներին։

Բ. Կրտսեր պեսերի կազմի վերաբերմամբ.

1. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 5 վերակարգ.

2. Կալանավորել պահանոցում մինչև 7 որ.

3. Զարժանացնել պաշտոնի բարձրացմանը.

4. Գործադրել 11-րդ հոդվածի 2—7 կետերում հիշված խրախուսանքի տեսակները և ներկայացնել 8—13 կետերում թվածներին։

Գ. Միջին պեսերի կազմի վերաբերմամբ.

1. Հերթից դուրս ծառայության նշանակել մինչև 2 վերակարգ.

2. Տնային կալանքի յենթարկել մինչև 5 որ.

3. Կալանավորել պահանոցում մինչև 5 որ.

4. Գործադրել 11-րդ հոդվածի 3, 4, 5, և 7 կետերում հիշված խրախուսանքի տեսակները և ներկայացնել 8—13 կետերում թվածներին։

Դ. Ավագ պեսերի կազմի վերաբերմամբ.

1. Տնային կալանքի յենթարկել մինչև 3 որ.

2. Գործադրել 11-րդ հոդվածի 3—5 կետերում հիշված խրախուսանքի տեսակները և ներկայացնել 8—13 կետերում թվածներին։

23. Վոչ-առանձին բրիգադների հրամատարները ու կոմիսարները, դիվիզիաների հրամատարների ոգնականները յեվ նրանց համապատասխան պետերն իրավունք ունեն.

Ա. Գնդերի հրամատարների ու կոմիսարների յեվ նրանց հավասար պետերի վերաբերմամբ.

1. Դիտել տալ (դիտողություն անել).

2. Հանդիմանություն հայտնել բանավոր, գրավոր և հրամանի մեջ.

3. Շնորհակալություն հայտնել բանավոր, գրավոր և հրամանի մեջ։

Բ. Գումարտակների հրամատարների յեվ ավելի ցածր պետերի վերաբերմամբ.

Ունեն գնդերի հրամատարների իրավունքները։

24. Դիվիզիաների հրամատարները ու կոմիսարները յեվ նրանց համապատասխան պետերն իրավունք ունեն.

Ա. Բրիգադների, գնդերի հրամատարների ու կոմիսարների յեվ նրանց հավասար պետերի վերաբերմամբ.

1. Դիտել տալ (դիտողություն անել).

2. Հանդիմանություն հայտնել բանավոր, գրավոր և հրամանի մեջ.

3. Շնորհակալություն հայտնել բանավոր, գրավոր և հրատանի մեջ.

4. Գործադրել 11-րդ հոդվածի 3—5 կետերում հիշված խրախուսանքի տեսակները և ներկայացնել 8—13 կետերում թվածներին։

Բ. Գումարտակների հրամատարների յեվ ավելի ցածր պետերի վերաբերմամբ.

Գործադրել կարգապահական միջոցներն ամբողջական ծավալով և խրախուսանքների այն միջոցները, որոնք հիշված են 11-րդ հոդվածի 1—7 կետերում, և ներկայացնել նույն հոդվածի 8—13 կետերում թվածներին։

25. Զորամասերմինների (կորպուսների) հրամատարներն ու կոմիսարները յեվ նրանց համապատասխան պետերն իրավունք ունեն.

Ամբողջ կազմի վերաբերմամբ.

Գործադրել հոդված 24-ում թվածները։

26. Շրջանների զորքերի հրամանատարներն ու Հ. Ռ. Խ. անդամները, կենտրոնական գլխավոր վարչությունների պետերը յեվ նրանց համապատասխան պետերն իրավունք ունեն.

Ա. Ամբողջ կազմի վերաբերմամբ.

Գործադրել հոդված 24-ում թվածները։

Բ. Դիվիզիաների հրամատարների ու կոմիսարների յեվ նրանց հավասար պետերի վերաբերմամբ.

Գործադրել հոդված 24-ում թվածները և

տնային կալանքի յենթարկել մինչև 7 որ։

Գ. Բրիգադների, գնդերի հրամատարների ու կոմիսարների յեվ նրանց հավասար պետերի վերաբերմամբ.

1. Գործադրել հոդված 24-ում թվածները.
2. Տնային կալանքի յենթարկել մինչև 7 որ.
3. Կալանավորել պահանոցում մինչև 7 որ.

27. Կայազորների պետերն իրավունք ունեն.

1. Պաշտոնով հավասար և ավելի բարձր անձերի վերաբերմամբ զեկուցագրել վերադասության կարգով.

2. Կայազորի մնացած ամբողջ կազմի վերաբերմամբ ունեն իրենց կատարած պաշտոնի համեմատ իրավունքները։

Ծանոթություն. Գնդի հրամատարից ավելի ցածր պաշտոն ունեցող կայազորի պետը կայազորի կազմի վերաբերմամբ ունի գնդի հրամատարի կարգապահական իրավունքները։

28. Խ. Ս. Հ. Մ. Հեղափոխական Ռազմական Խորհրդի բոլոր անդամներն իրավունք ունեն կարգապահական միջոցներն իրենց պաշտոնին վերապահված իրավունքների սահմանում կիրառել Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի ամբողջ անձնական կազմի վերաբերմամբ,

բացի շրջանների հրամանատուներից ու Հ. Ռ. Խ. անդամներից և կենտրոնական վարչությունների պետերից։

29. Խ. Ս. Հ. Մ. Հեղափոխական Ռազմական Խորհրդի նախագահն ու նախագահի տեղակալն իրավունք ունեն Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի ամբողջ անձնական կազմի վերաբերմամբ կիրառել կարգապահական իրավունքներն ամբողջ ծավալով։

30. Բոլոր պետերը, դասակների հրամատարներից սկսած և ավելի բարձր, իրավունք ունեն արտակարգ, անհետաձգելի դեպքերում ժամանակավորապես հեռացնել պաշտոնից ավելի ցածր պաշտոնի անձերին և անհապաղ զեկուցագրել վերադասության կարգով, բացատրելով պատճառները։

Այն պետը, որին վերապահված է հեռացվածի վկայագիրը հաստատելու իրավունքը, զեկուցագիրն ստանալուն պես, անհապաղ հետաքննություն է կատարում, որից հետո կամ հաստատում է հիշյալ ընույթի կարգադրությունը և հեռացվածին դատի յե տալիս, կամ պատասխանատվության է կոչում, նույնպես դատարանի միջոցով, այն պետին, որը դիմել է հիշյալ միջոցին առանց բավական հիմունքների։

ԳԼՈՒԽ V

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՅԵՎ Ի ԿԱՏԱՐ ԱԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

31. Կարգապահական և խրախուսական միջոցները կիրառվում են բոլոր զինվորականների վերաբերմամբ, առանց բացառության։

32. Կարգապահական և խրախուսական միջոցների կիրառումը պետերի կազմի իրավունքն ու պարտականությունն է։ Այդ պարտականությունից խուսափողները կամ իրենց հատկացված իրավունքի սահմանից անցնողները յենթակա են պատասխանատվության կամ սուն կանոնագրքի, կամ դատական կարգով։

33. Միևնույն զանցանքի համար կիրառվում է միայն մեկ կարգապահական միջոց։

34. Բոլոր ուղղակի պետերն իրավունք ունեն կարգապահական միջոցները կիրառել իրենց զորամասի հրամատարական, քաղաքական, վարչական և մնացած կազմի վերաբերմամբ։

35. Բոլոր պետերը, յեթե նկատեն, որ զինվորականը խախտում է ծառայության պար-

տականությունները, կամ իրեն վարքով նվաստացնում է Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի քաղաքացի-ռազմիկի արժանապատվությունն ու բարձր կոչումը, պարտավոր են վերջինիս ցույց տալ նրա զանցանքը և անհրաժեշտ միջոցներ գործադրել նկատածը դադարեցնելու համար։

Ծանոթություն. Այն զինվորականը, որին զանցանքի ցուցում է արված, պարտավոր է զեկուցել իր անմիջական պետին։

36. Յեթե պետը, այս կամ այն զանցանքի համար կարգապահական միջոցը կիրառելու նպատակամամբ, իրեն վերապահված իրավունքը քիչ է համարում, այդ դեպքում նա վերադասության կարգով առաջադրություն է անում զանցանքի լրջությանը համապատասխան միջոց կիրառելու համար։

37. Ավելի բարձր պետերն իրավունք չունեն վերացնելու կամ պակսեցնելու այն կարգապահական միջոցը, որ որոշված է ավելի ցածր պետերի կողմից, յեթե վերջիններս իրենց իրավունքների սահմանից դուրս չեն յելել։

38. Խախտումը նկատող պետին վերապահվում է կարգապահական միջոցի չափն անձամբ որոշելու իրավունքը կամ այդ իրավունքը թողնել զանցանք կատարողի ավելի ցածր ուղղակի պետերին։

39. Կարգապահական միջոցը պետի կողմից կիրառվում է անհապաղ, հենց վոր նրան հայտնի յե դառնում կատարած զանցանքի մասին, և վոչ ուշ, քան մի ամիս ժամանակամիջոցում զանցանքը կատարած որից։ Մի ամիս ժամանակ անցնելուց հետո, իբրև կանոն, միջոցը չի գործադրվում։

40. Կարգապահական միջոցները, իբրև կանոն, պետք է կիրառվեն աստիճանական կարգով, անպայման հաշվի առնելով զանցանք կատարողի տարիքը, բարոյական ու ֆիզիկական հատկությունները և ծառայության մեջ գտնվելու ժամանակամիջոցը, նույնպես և այն պարագան, վորի մեջ տեղի յե ունեցել կարգապահության խախտումը։

41. Կարգապահական միջոցի գործադրությամբ սահմանափակվելու կամ զինվորականների զանցանքների մասին գործը դատական մարմիններին հանձնելու իրավունքը պատկանում է առանձին զորամասի պետին։

42. Յեթե զանցանքը մի քանի անձեր են կատարել, միջոցը նշանակվում է բոլորի համար։

Յեթե զանցանքի մասնակիցներից մեկը դատի յե տված, ճնացածները ել պետք է պատասխանատվություն կրեն նույնպես դատարանի միջոցով։

43. Կարգապահական միջոցի կիրառումը զանցանք կատարողին դատից չի ազատում։

44. Դատի տալն ազատում է մեղավորին առաջուց վորոշված, բայց չկատարածված կարգապահական միջոցից։

45. Յեթե մի վորևե զանցանքի համար միջոցը նշանակվել է կամ ինքը զանցանքը հայտնաբերվել է այն ժամանակ, յերբը զանցանք կատարող զինվորականը փոխադրվել է մի ուրիշ զորամաս, այդ դեպքում դրա մասին հաղորդվում է նոր պետին՝ փոխադրվածի բնութագրության համար։

46. Կրկնակի (շարային և ըստ ստանդարտության) ստորադրելություն ունեցող անձերի վերաբերմամբ կարգապահական միջոցը կիրառվում է միայն շարային պետի միջոցով։

47. Յերկրային զորամասերում ծառայելու և նախակոչյան պարտաստությունն անցնելու ժամանակ, նկատի ունենալով վարժական հավաքների կարճատևությունն ու վարժությունը չընդհատելու անհրաժեշտությունը, իրավունք է վերապահվում կալանքներն ի կատար ածել հավաքները վերջանալուց հետո։

48. Վոչ մի կարգապահական միջոց ծառայության ցուցակի մեջ չի մտցվում։

49. Կարգապահական միջոցի կատարածումը չի դադարեցվում զանգատ տալու դեպքում։

ԳԼՈՒԽ VI

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՅԵՎ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՏՅԱՆ

50. Բոլոր կարգապահական միջոցները ու խրախուսանքները մտցվում են կարգապահական և խրախուսական միջոցների մատյանի մեջ (հավելված № 1)։

51. Յուրաքանչյուր զորամասում պահվում է յերկու տեսակի կարգապահական և խրախուսական միջոցների մատյան.

ա. տոկական ու ժամկետով ծառայող կրտսեր պետերի կազմի համար յուրաքանչյուր վաշտում և զորախմբում,

բ. գերակետիկ ծառայող և մյուս պետերի կազմի համար զորամասի շտաբում։

52. Վաշտային մատյանները ստուգում են գումարտակի հրամատարն՝ ամեն ամիս և գնդի հրամատարը՝ վոչ պակաս, քան 6 ամսվա ընթացքում մեկ անգամ։

53. Ստուգման հետևանքները նշանակվում են մատյանի մեջ։ Գնդերի հրամատարները և ա-

վելի բարձր պետերը, բացի այդ, հայտարարում են նաև զորամասի հրամանի մեջ։

54. Բոլոր պետերը, զորամասի տեսչական զննության ժամանակ, պարտավոր են ստուգել կարգապահական միջոցների և խրախուսանքների կիրառման ճշտությունը, նույնպես և մատյանների կանոնավոր պահելը։

55. Մի զորամասից մյուսը փոխադրումների ժամանակ, բոլոր զինվորականների մյուս փաստաթղթերի հետ միասին ուղարկվում է նաև կարգապահական և խրախուսական միջոցների մատյանից քաղվածքը։

ԳԼՈՒԽ VII

ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

56. Զինվորականի հայրը, իր վերաբերմամբ, պետերի ապորինի կամ անարդար գործողությունների ու կարգադրությունների մասին, ծառայության համար սահմանված իրավունքներին ու առավելություններին չարժանացնելու մասին կամ սահմանված պիտույքներով չբավարարելու մասին, կոչվում է գանգատ։

57. Չի թույլատրվում գանգատ անել կարգապահական միջոցի խստության համար, յեթե պետը դուրս չի յեկել որենքով նրան վերապահված իրավունքների սահմաններից։

58. Արգելվում է գանգատ անել ուրիշի փոխարեն, կոլեկտիվ կերպով և ծառայության պարտականությունները կատարելու ժամանակ։

59. Գանգատները տրվում են բանավոր կամ գրավոր կերպով, վերադասության կարգով կամ տեսչական հարցման ժամանակ։

Ուղղակի պետի վրա գանգատը տրվում է

այն պետին, որին անմիջապես յենթարկվում է գանգատի առիթ տվող զինվորականը։

60. Բոլոր գանգատներն անհապաղ մտցվում են գանգատների մատյանի մեջ, որը պահվում է յուրաքանչյուր զորամասում (հավելված № 2)։

61. Իբրև կանոն, գանգատը պետք է արվի հենց վոր գանգատավորին հայտնի յե դառնում, վոր նրա իրավունքները խախտված են։

Գանգատ տալու վերջնական ժամկետը՝ խախտումից հետո տեղի ունեցող առաջին տեսչական հարցումն է։

62. Գանգատն ստացող պետը պարտավոր է տեսել գանգատը նայել և քննություն կատարել վոչ ուշ, քան մյուս որը։

63. Քննությունը կատարում է կամ պետը անձամբ, կամ նրա հանձնարարությամբ մյուս զինվորականներից մեկն ու մեկը, վորը ստորադրյալ չե վոչ գանգատավորին, և վոչ էլ այն պետին, վորի վրա գանգատ է տված։

64. Յեթե գանգատավորը յերկու շաբաթվա ընթացքում վոչ մի տեղեկություն կամ վճիռ չստանա, նա իրավունք ունի գանգատ տալ վերադասության կարգով ըստ ավագության հաջորդ պետին։

65. Ակներև անհիմն կամ դիտամբ տուա

գանգատ տալու համար, գանգատավորը պատասխանատվության է յենթարկվում կարգապահական կամ դատական կարգով։

66. Գանգատը հիմնավոր ճանաչող պետը պարտավոր է անհապաղ կարգադրություն անել գանգատավորի խախտված իրավունքները վերականգնելու մասին կամ խնդրել այդ մասին ավելի բարձր պետին։

67. Գանգատի առիթ տվող հանգամանքները քննելուց հետո, յեթե գանգատը հիմնավոր կինի, այն պետը, որի վրա գանգատ է տված, նայած նրա գործողություններին, յենթակա յե պատասխանատվության կամ կարգապահական, կամ դատական կարգով։

Զև № 1

Հավելված VI գլխի

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՅԵՎ ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՄԻ-ՋՈՑՆԵՐԻ ՄԱՏՅԱՆ

1. Սոսկական և ժամկետով ծառայող կրտսեր պետերի կազմի համար.

« » հրաձ. գնդի « » վաշտի

ԿԱՄ

. Գերակետիկ ծառայող և այլ պետերի կազմի համար.

« » հրաձ. գնդի.

1. Ազգանուն .....

2. Անուն և հայրանուն .....

3. Պաշտոն .....

4. Վոր թվից է ծառայության մեջ .....

5. Կրթություն .....

6. Կուսակցականություն .....

7. Սոցիալական ծագում .....

Ինչի համար	Յե՞րբ է կատարվել	Յե՞րբ է կիրառվել	Միջոցի տեսակը

Խրախուսանքի տեսակը	Ո՞վ է կիրառել	Ծանոթություն

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

№ 1 ձևի (առաջին յերեսի) 1 կետում թվածների համար մատյանը պահվում է վաշտում դասակ-դասակ, այբբենական կարգով, իսկ 2-րդ կետում թվածների համար՝ զորամասի շտաբում՝ այբբենական կարգով։

Զև № 2

Հավելված VII գլխի.

ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՄԱՏՅԱՆ

« » հրաձ. գնդի « » վաշտի.

Ազգանուն, անուն և հայրանուն	Պաշտոն	Գանգատի էությունը	Տալու ժամանակը

Ծանոթություն	Հեռանքները հայտնելու ժամանակը	Վճիռը գանգատի մասին	Ո՞ւմն է տված

ԲԱՌԱՑՈՒՑԱԿ

Այբբենական կարգ Алфавитный порядок
Անարդար գործողություն Несправедливое действие
Անհետաձգելի դեպք Случай, не терпящий отлагательства
Անհիմն գանգատ Неосновательная жалоба
Անձնական լուսանկար Личная фотографическая карточка
Անձնազոհություն Самопожертвование
Անմիջական պետ Непосредственный начальник
Անվանական հրազեն Именное огнестрельное оружие
— *սրազեն* именное холодное оружие
Անվանացուցակ Именной список
Ապօրինի գործողություն Незаконное действие
Առանձին զորամասի պետ Начальник отдельной части
Առանց առարկելու Беспрекословно
Առաջադրություն անել վերադասության կարգով Входить с представлением по команде
Աստիճանական կարգով В порядке постепенности
Ավագ պետերի կազմ Старший начальствующий состав
Ավագություն Старшинство
Ավագության կարգով հաջորդ պետը Следующий в порядке старшинства начальник
Արարք Поступок
— , *որին հետևում է դատական պատասխանատվություն* поступок, влекущий за собою судебную ответственность

Արգելում զորանոցից հեռանալու Воспрещение отлучки со двора
Արժանապատվություն Достоинство
Արտակարգ, անհետաձգելի դեպք Чрезвычайный, не терпящий отлагательства случай
Արտահերթ վերակարգ Внеочередной наряд

Բարեխիղճ վերաբերմունք Добросовестное отношение
Բռնատիրություն Захват

Գանգատ Жалоба
— անել заявлять жалобу, жаловаться
— — ուրիշի փոխարեն заявлять жалобу з другого
— — կոլեկտիվ կերպով заявлять жалобу коллективно
— — վերադասության կարգով заявлять жалобу по команде
— տալ подать жалобу, жаловаться, обжаловать
Գանգատի առիթ տալ Дать повод к жалобе
— առիթ տվող հանգամանքներ обстоятельства вызывавщие (вызвавшие) жалобу
— նայելը рассмотрение жалобы
— քննություն расследование жалобы
Գանգատների մատյան Книга жалоб
Գանգատավոր Жалобщик, заявляющий жалобу
Գաղտնապահություն Сохранение тайны
Գերակետիկ ծառայող Сверхсрочнослужащий
Գիտակցական թշնամություն Сознательная враждебность
Գիտամբ սուտ գանգատ Заведомо ложная жалоба

Դադարեցնել (կարգապահական միջոցի ի կատար ածելը) Приостанавливать (исполнение дисциплинарной меры)

Դասակարգորեն յենթարկ(վ)ելը Классовое подчинение

Դատական Судебный

— կարգով судебным порядком, в судебном порядке

— մարմին судебный орган

Դատի տալ Предать суду

Դիտել տալ Ставить на вид

Դիտողություն անել (մեկին) Ставить на вид (кому либо)

Դրոշի պատվավոր ընթերակա Почетный ассистент к знамени

Դրոշի պատվավոր ուղեկցող Почетный сопровождающий к знамени

Զանցանք Проступок

Զանցառու Нерадивый

Զեկուցագրել վերադասության կարգով Доносить по команде

Զինված հարկադրանք вооруженное иринуждение

— ուժ вооруженная сила

Զորախումբ Команда

Զորամասի շտաբ Штаб части (войсковой)

Զրկանքներ (մարտական կյանքի) Лишения (боевой жизни)

Ընթացք Процесс

Ժամկետ Срок
— *վերջնական* предельный срок
Ժամկետով, ժամկետավոր ծառայող Срочнослужащий

Ի կատար ածել Привести в исполнение
Իջեցում ավելի ցածր պաշտոնի Смещение на нисшую должность
Իրավունքների խախտում Нарушение прав

Խախտում Нарушение
Խախտված իրավունքները վերականգնել Восстановить нарушенные права
Խստություն Строгость
Խրախուսական միջոցներ Меры поощрения
Խրախուսանք Поощрение
— *ի միջոցներ* меры поощрения
Խրախուսել Поощрять

Ծանրություններ (մարտական կյանքի) Тяготы (боевой жизни
Ծառայության կարգուկանոն Служебный распорядок
Ծառայության համար սահմանված իրավունքներն ու առավելությունները Установленные за службу права и преимущества
Ծառայության նշանակելը Назначение на службу
— *պարտականություններ* обязанности службы
— *պարտականությունները կատարելը* исполнение служебных обязанностей
— *ցուցակ* послужной список

Կալանք Арест
— տնային домашний арест
— պահանոցում арест на гауптвахте
Կայազորի պետ Начальник гарнизона
Կանոնագիրք Устав
Կանոնադրություն Устав, положение
Կարգադրություն Распоряжение
Կարգապահական Дисциплинарный
— ազդեցության միջոցներ меры дисциплинарного воздействия
— իրավունք дисциплинарное право
— իրավունքներ ամբողջ ծավալով Дисциплинарные права в полном об'еме
— կարգով дисциплинарным порядком, в дисциплинарном порядке
— կանոնագիրք дисциплинарный устав
— միջոց (պատիժ) дисциплинарная мера (взыскание)
— միջոցներ կիրառել ամբողջ(ական) ծավալով применять дисциплинарные меры (взыскания) в полном об'еме
— և խրախուսական միջոցների մատյան журнал взысканий и поощрений
Կարգապահություն дисциплина
— զինվորական воинская дисциплина
— հեղափոխական революционная дисциплина
— թյան խախտում нарушение дисциплины
Կարճատև արձակուրդ Краткосрочный отпуск
Կորովամտություն Находчивость
Կրկնակի ստորադրելություն двойное подчинение

Կրտսեր պետերի կազմ Младший начальствующий состав

Հայտ, հայտարարություն Заявление
Հայտարարում Оглашение
Հանդիմանություն Выговор
Հանդիսավոր ժողով Торжественное собрание
— նիստ торжественное заседание
Հանդիսացում որինակելիների Отличие примерных
Հանցական հրաման Преступный приказ
Հաստատակամություն Твердость воли
Հաստատել վկայագիրը Утверждать аттестацию
Հատկացված իրավունքների սահմանից անցնել Превышать присвоенные права
Հետաքննություն Дознание
Հերթական արձակուրդ Очередной отпуск
Հիմնավոր գանգատ Основательная жалоба
Հիշեցում Напоминание
Հնազանդություն Повиновение
Հրաման Приказ
— ծառայության վերաբերյալ служебный приказ
Հրամանների առանց առարկելու կատարում Беспрекословное исполнение приказов
Հրամանատու զորքերի Командующий войсками

Ճարպկություն Расторопность

Մարտական հրաման Боевой приказ
— պարագա боевая обстановка
Մարտունակ Боеспособный

Միջին պետերի կազմ Средний начальствующий состав
Մրցակցություն Соревнование
Մրցանակ Приз

Տերկրային զորամաս Территориальная часть
Տենթարկություն Подчинение, подчиненность

Նախազգուշացում Предупреждение
Նախակոչյան պատրաստություն Допризывная подготовка
Նկատողություն Замечание
Նշանակ Значек
Նշանակում վերակարգի Назначение в наряд
— *վերակարգի հերթից դուրս* назначение наряд вне очереди
Նվեր Подарок
— *արժեքավոր* ценный подарок
— *համապատասխան մակագրությամբ* подарок с соответствующей надписью

Շարային ստորադրելություն Строевое подчинение
— *պետ* строевой начальник
Շնորհակալություն Благодарность
Շքանշան Орден
— *աշխատավորական Կարմիր Դրոշի* орден трудового Красного Знамени
— *Կարմիր Դրոշի* орден Красного Знамени

Որենք Закон
— *ով վերապահված իրավունքների սահմաններից դուրս գալ* выйти за пределы предоставленных законом прав

Ուղղակի պետ Прямой начальник

Չարամտորեն չենթարկվելը Злостное неподчинение
Չարժանացնելը Неудостоение

Պաշտոնի բարձրացում Повышение по службе (должности
— *բարձրացման չարժանացնելը* неудостоение к повышению по службе
— *բարձրացման չներկայացնելը* непредставление к повышению по службе
Պաշտոնից հեռացնել Отстранять от должности
Պատասխանատվություն Ответственность
— *թյան յենթակա լինել* подлежать ответственности
— *թյան յենթարկել* привлекать к ответственности
— *թյան կոչել դատարանի միջոցով* привлекать к ответственности по суду
— *թյուն կրել դատարանի միջոցով* нести ответственность по суду
Պատվավոր Почетный
Պատվի հեղափոխական զենք Почетное революционное оружие
— *վկայական* почетная грамота
Պարգևատրում Награждение
Պարզած դրոշ Развернутое знамя
Պարտականություն Обязанность
Պետերի կազմ Начальствующий состав

Ջանացողություն Старательность

Ռազմական գաղտնապահություն Сохранение военной тайны

Սահմանված բավարարում (պիտույքներով) Положен-
Սոսկական կազմ Рядовой состав (ное довольствие
Ստորադրելություն Подчинение
Ստուգում Проверка
Ստրկացում Порабощение

Վաղակետ վկայագիր Досрочная аттестация
Վաշտի (վաշտային) մատյան Ротный журнал
Վարժական հավաք(ուրդ) Учебный сбор
Վարժություն Обучение
Վերակարգ Наряд
Վերապահված իրավունք (իշխանություն) Предостав-
Վերացնել Отменять (ленное право (власть)
Վերջնական ժամկետ Предельный срок

Տեսչական Инспекторский
— *զննություն* инспекторский осмотр
— *հարցում* инспекторский опрос
Տոկունություն Выдержка

Ցուցակների մեջ մտցնելը Зачисление в списки
Ցուցում Указание

Փոխադրում Перевод

Քաղվածք կարգապահական միջոցների և խրախուսանքների մատյանից, կարգապահական և խրախուսական միջոցների մատյանից Выписка из журнала взысканий и поощрений.

ՏՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

16. Ռ. Դեյքեռ.—Հրացանաձգի նախապատրաստություն. 60 կ.

17. Լիգճաու.—Յերթ և հանդիսա. 25 կ.

18. Բ.Գ. Կ. Բ. Հրետազորի ժամ. մարտական կանոնագիրք, հրաձգության կանոններ 76 մմ. (3 մաուն.) թնդանոթներով զինված թեթև և հեծյալ հրետանու մարտկոցների համար. 50 կ.

19. Բ.-Գ. Կ. Բ. Հրետազորի ժամ. մարտական կանոնագիրք. հրաձգության կանոններ 122 մմ. (48 գծանի) գաշտային հաբիցով զինված մարտկոցների համար 50 կ.

20. Ցե. Սմիրնովակի յեվ Բատաշեվ.—Ռազմաքիմիական գործ, II հատ. 40 կ.

21. Բ.-Գ. Կ. Բ. ժամ. Կարգապահական կանոնագիրք 25 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ

1. Ռուս-Հայ. Ռազմական բառարան
2. Մաքսիմի գնդացրի նկարագրությունը
3. Լյուխի գնդացրի նկարագրությունը

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0046412

(154)

ԳԻՆՆ Ե 25 ԿՈՊ.

A 1/3127